Հուսիկ Արա

Միշտ հիվանդ լինեմ քեզանով

Իմ դեղը դու ես,
որովհետև ես հիվանդ եմ քեզնով:

Մահացուէ սիրո հիվանդությունը,
ու թե բուժվում է անգամ,
ծանր մնում է հետևանքը միշտ:
Բժշկի՛ր ինձ, սերս,
բայց ես ուզում եմ հիվանդ լինեմ քեզնով:

Քո աչքերը ամենասիրուն արևներն են տիեզերքի,
եթե նայես ինձ՝
ես կպտտվեմ հայտնաբերված նոր մոլորակ:
Քո մատները շշունչներ են թափանցիկ,
եթե գրկես ինձ՝
ես կհնչեմ ինքնանվագ երգեհոն:

Քո մաշկը մաքուր հորիզոն
ու եթեր է փափուկ,
եթե առնես քո մեջ ինձ՝
ես կխոսեմ նոր օրերի մարգարե
և կքայլեմ հրեշտակը քո ուղարկած:
Ուրիշ ոչ մի տեղ չկա քո շուրթերից,
թե համբուրես ինձ՝

ես աշխարհը շուռ կտամ առանց հենման կետի:

Քո ակնթարթը կատարյալ է ու մնայուն,
թե հպվես ինձ՝
ես կճչամ, որ այս կյանքում
ամեն բան հավերժ է ու ճիշտ:

Քո նմանը միայն դու ես,
ու թե ասես՝ սիրում եմ քեզ,
ես կդառնամ աստված
և կարարեմ դրախտը նորից,
ու որքան էլ արգելված պտուղ ուտես,
քեզ չեմ վտարի իմ պարտեզից:

Դու իմ դեղն ես,
Բժշկի՛ր ինձ, սերս,
բայց ես ուզում եմ
միշտ հիվանդ լինեմ քեզնով: